

ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՍՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՐՎԱՆԴ-ՕՏՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Քսաներորդ դարասկզբի նշանավոր հայ երգիծաբան Երվանդ Օսյանի գրական ժառանգության մասին հնչել են տարաբնույթ կարծիքներ, գրվել են բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում երգիծաբանի գեղարվեստական արձակին առնչվող այլևայլ խնդիրներ: Աշխատություններում տարբեր դիրքավորումներ են հանդիպում նաև գրողի լեզվի և ոճի ինչ-ինչ հարցերի վերաբերյալ: Այդ անդրադարձները, սակայն, մասնավոր բնույթ ունեն և հիմնականում նպաստում են գրականագիտական խնդիրների լուծմանը: Պարզ է, որ, էականորեն տարբերվելով վերլուծության գրականագիտական միություններից, լեզվաբանական իրողությունների քննությունը միանգամայն այլ ուղղվածություն ունի:

Այս հոդվածով նպատակ ունենք հանգամանորեն ներկայացնելու Երվանդ Օսյանի երգիծանքի կարևոր արտահայտություններից մեկի՝ **խոսուն անունների** կառուցվածքային և ոճական-երգիծական գործածության առանձնահատկությունները: Դրանք ոչ թե անձնանունների բառարաններում ամրագրված և երգիծաբանի կիրառած հատուկ անուններ են, այլ գեղագիտական նպատակադրումով ստեղծված կամ ընտրված անձնանուններ, մականուններ, տեղանուններ, որոնք մասնագիտական գրականության մեջ անվանվում են **խոսուն կամ երգիծական անուններ**:

Յուրաքանչյուր լեզվում հատուկ անունները առանձնակի դեր ունեն. դրանց կարևոր գործառնությունը անձի, տեղանքի, առարկայի և այլնի անվանումն է, որով դրանք առանձնանում և ճանաչելի են դառնում իրենց ընդհանուր տեսակից: Միաժամանակ, ինչպես նշում են լեզվաբանները, «լավ» հատուկ անունը կոնկրետ իմաստից զուրկ հարակ տարբերակող-բացահայտող նշան է¹: Բացի սրանից՝ բուն հատուկ անունների ընտրության դեպքում կարևորվում են ինչպես լեզվական, այնպես էլ գեղագիտական որոշ գործոններ՝ բարեհնչունություն, կարծություն, արդիականություն և այլն, որոնք անմիջականորեն պայմանավորված են անհատական ընկալումներով: **Խոսուն կամ երգիծական անունները** զգալիորեն տարբերվում են բուն հատուկ անուններից իրենց գործառնությամբ և կիրառության ոլորտով: «Երգիծական անունները, - կարդում ենք ուսումնասիրություններից մեկում, - ոճական օժանդակ միջոցներ են, որոնք կիրառվում են երգիծական բնավորության, իրադրության, խարդավանքի նկարագրության ուժգնացման համար»²:

1 Տե՛ս A. Gardiner, The Theory of Proper Names, London, 1954, էջ 18. А. Суперанская, Общая теория имени собственного, М., 1973, էջ 37:

2 С. Влахов, С. Флорин, Непереваемое в переводе, 2-е изд., М., 1986, с. 127.

Սրանք գործածվում են գրականության մեջ, մասնավորապես բանասիրական ժանրերում, երգիծական, ֆանտաստիկ ստեղծագործություններում: Խոստում անումները հասարակական փարածում չեն ստանում (այսինքն՝ միայն այդ երկում են հատուկ անուն) և հասկանալի են միայն փոխյալ ստեղծագործության շրջանակներում: Պարզապես այն է, որ ճիշտ ընտրված կամ ստեղծված խոստում անունը կարարում է ոչ այնքան անվանողական-ճանաչողական գործառույթ, որքան դառնում է գեղարվեստական կերպարի ստեղծման, նաև փոխականացման միջոց: Սրանք լեզվաճանաչական փոփոխության բարդ միավորներ են և իրենց կառուցվածքային ու խմաստաբանական առանձնահատկությունների պահպանման առումով լուրջ դժվարությունների են հանգեցնում կիրառության և հարկապես թարգմանությունների ժամանակ³:

Խոստում անումների ստեղծման մտահղացումը գալիս է դեռևս անտիկ շրջանից (Արիստոփանես Բ. ծ. ա. Ե. դ.) և առավել փարածվում՝ միջին դարերից սկսած (Ֆ. Ռաբլե, Վ. Շեքսպիր, Մոլիր, Զ. Սվիֆթ, Դ. Ֆոնվիլիյին, Ն. Գոգոլ և այլք): Երգիծական խոստում անումների հաջող կազմության և գործածության օրինակներ կան նաև հայ գրողների երկերում, որոնք արժանացել են ուսումնասիրողների ուշադրությանը: Ինչպես, օրինակ՝ Ե. Զաքենցի «Երկիր Նաիրի» վեպի հերոսները (**Մագուրի Նամո, Մեռելի Ենոք** և ուրիշներ): Կամ՝ Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ում կիրառված **Նազարաշեն, Զոռա սարան, Ղոռորդան, Արջաթոթոշ, Խոզենի** և այլ երգիծական կազմությունները երգիծական նոր որակներ են հաղորդում կարակերգությանը: Նայ երգիծանքում այսպիսի անունների ընտրության և ստեղծման, ինչպես նաև դրանց գործածության քանակական և որակական առումներով Ե. Օդյանը լավագույններից է: Նրա գեղարվեստական արձակում է՝ գլխավոր, երկրորդական հերոսներից շարքերը հանդես են գալիս այդպիսի անուններով: Դրանք երգիծելով ցուցադրում են նրանց հոգեբանության կամ բնավորության այս կամ այն մերժելի, բացասական, երբեմն նաև վտանգավոր կողմը:

Կերպարներին տրվող խոստում անումների ընտրությունը սովորաբար պայմանավորված է երեք գործոնով. 1. կերպարի մասնագիտությամբ կամ զբաղմունքով, 2. կերպարի արտաքինով, 3. կերպարի ներքին հատկանիշներով:

Գրողը նշված երեք դեպքերում էլ ընտրում է երգիծական ամենաբնորոշ հատկանիշը, քանի որ խոստում անումների միջոցով արդեն որոշակի վերաբերմունք և ուշադրություն է դրսևորում կերպարի նկատմամբ: Բացի սրանից՝ դրանք միաժամանակ փոփոխություն են փոխ կերպարների ազգային, ընկերային, հոգեբանական և այլ հատկանիշների մասին:

Օդյանական խոստում անումների կազմությունը կամ ընտրությունը առավելապես պայմանավորված է **կերպարի բնավորության այս կամ այն շեշտված գծով, ներառյալստիկով**, իսկ մասնագիտություն կամ զբաղմունք հուշող խոստում անումներ չեն հանդիպում:

Այդպիսի անուններ գործածելիս գրողն ունի ընտրության երկու հնարավորություն.

3 Տե՛ս **Ա. Քամայան**, Խոստում անումների թարգմանությունը. «Բաները Երեսանի համալսարանի. հասարակական գիտություններ», 2007, թ. 3 (123), էջ 179-185:

կան լեզվի բառապաշարից վերցնում է առավել հարմար բառը (հիմնականում գոյական կամ ածական խոսքի մասերից)՝ գործածելով այն որպես հայրուկ անուն, մականուն, կամ բառակազմական որևէ եղանակով կերպում նոր անուն: Սովորաբար ամեն գրող նախապապովությունը պալիս է դրանցից մեկին: Օրինակ՝ պարոնյանական խոստուն անունները (շապ չեն) ընկրված են առաջին սկզբունքով՝ **Երկար, Փայլակ, Կայծակ** («Պաղպասար աղբար»): Այս սկզբունքը բնորոշ է նաև չարենցյան երգիծական անուններին, որոնք մեծ մասամբ մականուններ են, իսկ, օրինակ, Դեմիրճյանը ինքն է կերպում խոստուն անուններ, որոնց հաջող գործածությունը երգիծական լիցք է հաղորդում երկին:

Անժիպուլի է, որ խոստուն անունը Օսյան երգիծաբանի նախընտրված ռճական միջոցներից է. նրա սրբազանություններում առանձին դեպքերում այդպիսի անուններ ունեն նաև քաղաքական այս կամ այն խմբավորումը, ակումբը, կազմակերպությունը, թաղամասը: Իսկ խոստուն անունների ընկրության մեջ նշված երկու սկզբունքներն էլ գործուն են: Մեզ համար առավել առաջնային է ներկայացնել դրանց լեզվառճական առանձնահատկությունները և պարզել, թե այս կամ այն խոստուն անունը որքանով է համապատասխանում պոլյա գեղարվեստական միջավայրին, ռճական փորձության և գրողի նպատակադրմանը:

Այսպես, այդ անունների մեջ հերաբրբրական են նախ և առաջ **հեղինակային կազմությունները**, որոնք գլխավորապես կերպարների **ազգանուններ են**: Ճիշտ է, դրանցում կան նաև կազմություններ, որոնք գեղարվեստական երկի շրջանակներում մնում են անհասկանալի, չպարճառաբանված, ինչպես՝ Նովիանեն **Կորեկյան**⁴ (երկրորդական դրական հերոս է, վիպական գործողությունների զարգացման ընթացքում երկար ժամանակ չի երևում), **Ծառունի** («Նայ փխաբորան», 281): Սակայն ընդհանրության մեջ երգիծական խոստուն անունները կազմված են ճաշակով, վարպետորեն և որոշ առումով էլ թեթևացնում են երգիծական կերպարի սրբազան «բեռը»: Դրանց կազմության մեջ նկատվում է լեզվառճական հստակ օրինաչափություն: Նեղիմակն ընկրում է իմաստային առումով «հարմար» բառաբան (բառահիմք) և ավելացնում **-յան(ց)** կամ **-ունի** վերջածանցները, որոնք, ինչպես գիտենք, հայերենում ազգանվանակերպ ձևություններ են: Այս դեպքում, ի տարբերություն բուն հայրուկ անունների, առաջնային է դառնում բառահիմքի բաղադրիչի իմաստը. կարևորվում է այն հանգամանքը, թե պոլյա բառահիմքի ընկրությունն իր իմաստով որքանով է նպաստում կերպարի բնութագրմանը, նրա երգիծական կողմերի ցուցադրմանը:

Այսպես, Գեղամ **Սոխիկյանը** «Ճեպընթաց նորածինը» սրբազանության գլխավոր հերոսն է, որի մասին հեղինակը գրում է. «Երեսուրեհիկ գարուններ և նոյնքան երեք տարբեր եղանակներ բոլորած այս երիտասարդը, իր մանկական միամտությունն է բան մը կորսնցուցած է»⁵: Երգիծաբանը ներկայացնում է ամուրի երիտասարդին, որը ամուսնա-

4 **Եր. Օսյան**, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 5, Երևան, 1960, էջ 11: Այսուհետև 6-հատորյակից արվող մեջբերումների հղումները կարվեն շարքայանքում. փակագծերում կնշվեն հատորը և էջը:

5 **Եր. Օսյան**, Ճեպընթաց նորածինը, Կ. Պոլիս, 1920, էջ 1: Այսուհետև այս գրքից արվող մեջբերումների հղումները կարվեն շարադրանքում. փակագծերում կնշվեն վերնագիրը և էջը:

նախու համար կարարյալ կին է փնտրում: Փնտրության ժամանակ Գեղամը ինքնամոռաց սիրահարվում է Զապել Կոմիթյանին⁶՝ թեթևաբարո մի աղջկա, որ «առնուրդական հասարակության մեջ այդ ազգությունը ա՛լ առելի միջոցներ գտեր էր աճելու և կարարելազործուելու» (ն. Կ., 4): Նրանց ամուսնությունից հինգ ամիս անց ծնվում է առաջնեկը, և Զապելի սիրելեան բժիշկ Սիսակին հեշտությամբ հաջողվում է համոզել Գեղամին, որ «խոշոր, աղուորիկ մանչը» բժշկության մեջ խիստ հազվագյուտ երեւոյթ է և հայրնի է «ճեպընթաց նորածին» անունով: Դիպաշարային համառոտ անդրադարձը պարզորոշ ցուցադրում է **Սոխիկյան** ազգանվան բառահիմքի երգիծական ընկերությունը: Կարելի է ենթադրել, որ **սոխիկ** բառահիմքի **սոխ** ձևույթի ընկերությունը անմիջականորեն պայմանավորված է **սոխի գլուխ** դարձվածքի իմաստներով՝ 1. բթամիտ՝ ապիկար մարդ, 2. շճմած՝ շվարած մարդ, 3. անարժեք՝ աննշան բան⁷: Իսկ բառահիմքի **-իկ** վերջածանցում համարելովում են ածանցական իմաստներից երկուսը՝ եւ որեւէ հարկությամբ օժտված լինելու, եւ փաղաքական, նվաստական իմաստները: Այսպիսի ազգանվան սրբոժումով երգիծաբանը հումորով ծաղրում է հերոսի՝ ապուշության հասնող միամտությունը:

«Գործի մարդիկ» անավարտ երկում գլխավոր հերոսներից մեկին հեղինակը փալիս է **Կերմերյան** ազգանունը: Տասնչորս փարեկանից աշակերտել էր փարբեր վարպետների, նրանցից աստիճանաբար յուրացրել «մեծկակ սրակ մը»: Իսկ գոյությունն «այն աստիճան անարար կարարելությամբ գլուխ հանած էր, որ օրերը զինաթափ հանդիսարես մը լոկ կրցավ ըլլալ կողոպուտին» (1, 346): **Կերմերյան** ազգանվան **կեր** բաղադրիչը հանդես է գալիս փոխաբերական իմաստով. հեղինակը սրանով շեշտում է այն իրողությունը, որ վերջինս ապրում է ուրիշների փողերը «**ուտելով**», յուրացնելով: Ազգանվան կազմությունը (**Կեր+մեր+յան**) գեղարվեստական երկի շրջանակներում միանգամայն հասկանալի է, դիպուկ, նաև բարեհունչ. այն ոճական-երգիծական փեսանկյունից հաջողված է այնքանով, որ լիարժեք համապարասխանում է կերպարի երգիծական նկարագրին:

Բառակազմական նշված սկզբունքով սրբոժված խոստն անունները գերակշռում են Օրյանի հարկապես քաղաքական երգիծանքում (նույնիսկ ընկերային-կենցաղային վեպերում («Թաղականին կնիկը», «Վաճառականի մը նամակները...»), որպես վարպետներն առաջ են քաշված նաև հասարակական-քաղաքական հարցեր, երգիծաբանը օգտվում է խոստն անունների ոճական հնարքից: Օրինակ՝ «Նեղափոխության մակաբույծները» շարքի «Անվավեր հերոսներ» պարմվածքի հերոսներից մեկին հեղինակը փալիս է **Անկախյան** ազգանունը: Վերջինս «յեղափոխականներու բոցեռանդ, անձնվեր, միամիտ հիացողն» է, որ Ալեքսանդրիայում ապրում է ծխախոտի փոքրիկ խանութով: Երգիծաբանը ջերմությամբ և մեղմ հումորով է գրում **Անկախյանի** մասին. երազելով անկախության, կորցրած հայրենիքում վերահասարակվելու մասին՝ նա իր փանն ու խանութում մշտապես ապաստան է փալիս բոլոր «անվավեր» հերոսներին, օգնում

⁶ Ներոստի ազգանունը թերեւս փապագրական սխալի պարճառով փրված է երկու ձեռով՝ **Կոմիթյան** (փնս էջ 4, 7) և **Կոմիթյան** (փնս էջ 6):

⁷ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացարարական բառարան, 2 հատորով, հ. 2, Երեւան, 1976, էջ 1316:

և կերակրում ինքնակոչ հեղափոխականներին: Բառակազմական վերը նշված սկզբունքով կազմված **Անկախյան** ազգանվան կիրառությունը նպատակ ունի ընդգծելու հերոսի հենց այս՝ անկախության ձգտումը, որը դարձել է նրա էության անբաժան մասը: Ստեղծված խոստում ազգանունը թերևս լրացնում, ամբողջացնում է հերոսի դիմանկարի կերպումը:

Ուշագրավ են «Պրոպագանդիստը» երկի կերպարների խոստում անունները: Ընդհանրապես Օսյանի գրական հարուստ ժառանգության մեջ այս երկը աչքի է ընկնում քարաբեմությամբ խոստում անունների առաջ գործածություններով: Դրանց մեջ մրափակցման ինքնատիպությամբ և անսպասելիությամբ առանձնանում են հարկապես կերպարներից երկուսի ազգանունները՝ **Կուլտամյանց** և **Ինձելպուրյանց**: Կուլտամյանցն իր ուժերը փորձել էր մանկավարժության մեջ, սակայն դա նրա երազանքների իրագործման ոլորտը չէր: «Այլ Էրզրումցի Վարդան **Մարտիկյան** աներեւույթ եղած էր ու իրեն հաջորդած՝ Կովկասցի Աբգար **Կուլտամյանց**» (1, 282): Օսյանը հանդես է բերում հերթական մակարելծին, որը «խոշոր, վճռական հարվածով մը իր ամբողջ ապագան ապահովելու կարելիությունն ընդհանարեց այս նոր ասպարեզին մեջ (հեղափոխության մեջ - Լ. Ս): ...Ասոր համար երկու միջոց անհրաժեշտ էին. նախ՝ նոր զարկ մը տալ Պոլսո **դրամական հավաքումներին**, երկրորդ՝ **դադրեցնել կեդրոնի դրամ դրկելու դրությունը...** (ընդգծ. իմն է. 1, 287): Նկատելի է, որ միևնույն հերոսին երգիծաբանը հարույկ նպատակադրումով տալիս է միանգամից երկու խոստում ազգանուն՝ **Մարտիկյան** և **Կուլտամյանց**: Եթե **Մարտիկյան** ազգանվամբ (**Մարտիկյան**) գրողը ցուցադրում է նրա աննահանջ մարտնչող էությունը, ապա վերը նշված նկարագրությամբ պարզ է դառնում **Կուլտամյանց** ազգանվան բառահիմքի **կուլ+քամ** բաղադրիչների ընկալության նպատակը: Առանձնակի ջանք չգործադրելով կերպարի հոգեբանության մանրամասն նկարագրության համար՝ **Կուլտամյանց** անվան հաջող կազմությամբ գրողը վարպետորեն բացահայտում է նրա ողջ էությունը: Ճիշտ է այն նկարագրումը, որ խոստում անուններն արքայառոց են, տապալմորիչ և գեղարվեստում հաճախ իրենց վրա որոշակի իմաստալիս-արքայառոցական բեռ են կրում⁸: Գրեթե նույն տիպին է **Ինձելպուրյանցը**, որը ուղարկվել է Կեդրոնից՝ Կուլտամյանցի գործերը վերաքննելու: Այս դեպքում նույնպես ոճական-երգիծական առումով արդյունավետ է երգիծական ազգանվան ստեղծումը: Այս սկզբունքով են ստեղծված **Կերավյանց**, **Ծրարյան**, **Մափորյան**, **Սուսերյանց**, **Սասանյան**, **Մեծամեծյան**, **Կարկամյան** ազգանունները, որոնցից յուրաքանչյուրը ստեղծագործության շրջանակում ոճականորեն հաջող և պարճառաբանված կազմություն է:

Օսյանը այդպիսի անուններ է կազմում նաև **բառահիմք + -ունի** վերջածանց կաղապարով: «Ընկ. Բ. Փանջունի»-ում կերպարներից մեկն է ընկեր **Մարսափունին**, որը հայտնվում է Վանում և իր դասախոսություններով նպաստում «ազգային վերածնության գործին»: Թեև արքայառոց որևէ ակնարկ չկա վերջինիս ամբողջավարական գոր-

⁸ Տե՛ս **В. Лукин**, *Художественный текст. Основы лингвистической теории. Аналитический минимум*, М., 1999, էջ 347:

ծունեության մասին, սակայն ազգանունն արդեն հուշում է նրա դասախոսությունների և քաղաքաշավի թողած կործանարար տպավորությունը: Նրանց «ազգանվեր գործին» է միանում նաև **Որոպունին**: Նամակագրության եղանակով գրված «Ընկ. Բ. Փանջունի» վեպում հեղինակը գրեթե բացակայում է, սակայն, կարելի է ասել, որ նրա կերպած երգիծական խոստուն անուններով, այնուամենայնիվ, ընթերցողը տեսնում է հեղինակին:

Որոշ դեպքերում նշված **բառահիմք + ունի** կադապարում **ունի** բաղադրիչը գիտակցվում է որպես հիմնական ձևույթ (**ունեն** պակասավոր բայի ներկա ժամանակի եզակի 3-րդ դեմք): Ասվածի վառ օրինակն է հենց հայ քաղաքական երգիծանքի հայտնի երգիծարիսի՝ Փանջունու անունը, այս առումով համոզիչ է գրականագետ Ս. Մուրադյանի դիտարկումը. «...Փանջունին նույնպես երգիծական մականունն է և արևելահայ ընթերցմամբ պիտի հնչի **բան չունի**: Իսկ «Ընկ. Բ. Փանջունի» վերնագրում դրված Բ տառն էլ **Բանջունի** կարդալու համար է»⁹:

Մեկ այլ դեպքում նույն կադապարով կազմված խոստուն անունը հանգեցնում է երկրնկալումների: «Թաղականին կնիկը» վեպում կուսակցական երիտասարդության «**Պայքար Լսարանի**» անդամներից մեկն է ընկեր **Կայծունին**, «որ գուրկ չէր ամբոխավար պերճախոսութենն մը, շաք դյուրավ կրցավ համոզել իր ընկերները...» (6, 355): Այս հերոսի (երկրորդական) ազգանվան **ունի** մասնիկը մի դեպքում կարող է ընկալվել որպես հիմնական ձևույթ՝ **կայծ ունի**, այսինքն՝ խոսելու, համոզելու ջիղ ունի, որը, ի դեպ, ընդգծվում է դիպաշարի տարբեր հարվածներում: Սակայն մյուս դեպքում այդ բաղադրիչը կարող է դիտվել որպես ազգանվանակերպ վերջածանց, որը, համեմայն դեպս, այնքան էլ հակասական կամ սխալ ընկալում չէ՝ ի տարբերություն Փանջունի անվան, որտեղ պարզորոշ է **ունի** բաղադրիչի՝ որպես հիմնական ձևույթի գործածությունը: Տարբերակումներից յուրաքանչյուրը ինչ-որ առումով համապատասխանում է երկրորդական հերոսի սրեղծման մտապահմանը:

Օսյանի գեղարվեստական արձակում մեկ այլ խումբ են կազմում այն խոստուն անունները, որոնք հեղինակն ընկրում է հասարակ գոյականներից ու այլ խոսքի մասերից և կիրառում որպես անձնանուններ կամ մականուններ: Այս դեպքում, իհարկե, լայն են բառընտրության սահմանները, սակայն մեծ է նաև վրիպելու հնարավորությունը, քանի որ խոստուն երգիծական անունը «էսթերիկական արժեք է ստանում՝ եթե դուրս չի գալիս կոմիզմի շրջանակներից, գեղարվեստորեն հիմնավորվում է, չի մնում իբրեւ հայտարարություն, իբրեւ միություն»¹⁰: Օսյանի քաղաքական մակաբույծները հասկանալի պարճառներով ունեն «հեղափոխաշունչ» անուններ, մականուններ, ինչպես՝ **Դաշույն Արպունի** (1, 406), **Կարպիս Նիզակ** (6, 481), **Շանթ, Փայլակ, Կայծակ, Խեղ Ավո, Գիծ Մակար** («Ընկ. Բ. Փանջունի»), **ամենափոքր** կրակոտ հեղափոխական **Արոմը** (1, 276) և այլն, որոնց ընկրությունը հիմնավորվում է երկերի դիպաշարային զարգացումներով:

Օսյանի սրեղծագործություններում ուշագրավ են նաև քաղաքական տարապե-

9 Ս. Մուրադյան, Նովանդ Օսյան: Կյանքը և գործը, Նրեան, 1996, էջ 157:

10 Ա. Մակարյան, Նովանդ Օսյան, Նրեան, 1965, էջ 461:

սակ խմբավորումների, կազմակերպությունների, թաղամասերի խոստուն անունները, որոնք ընկրված են ըստ հերոսների գործունեության հիմնական հասկանիչների: Օրինակ՝ «Աշուր պեյրն ու վարիչն էր այդ խումբին, որ պաշտոնապես վավերացած էր եւ «Անյոժ թաղի Պապուհաս խումբը» անունով մկրտված» (1, 259), «Ուրիշ կուսակցություն մըն ալ Ակումբ մը ուներ թաղին մեջ՝ «Շանթ Ակումբ»-ը, որուն անդամները բնականաբար կարաղի հակառակորդներ էին «Պայքար Լսարան»-ին» (6, 355), «Ճիշդ նույն առթուն կը սպասեր Ոսկեհանք թաղի Վրեժխնդիր խմբի պեյրին, որ հավաքած դրամները պիտի բերեր» (1, 288) եւ այլն: Օպյանը «Պրոպագանդիստը» երկում թաղն անվանում է Ոսկեհանք, որովհետեւ կեղծ հեղափոխականները ամենամեծ գումարները հավաքում էին նշված թաղից: Կամ՝ Անյոժ թաղում էր ապրում «հեղափոխությամբ բռնկված» հերոսների մի մասը:

Բերված օրինակներից երևում է, որ գրողին հաջողվել է կարարել այնպիսի բառերություն, որի միջոցով ստացված խոստուն անունները լիարժեքորեն արտահայտում են իրականի եւ երեւակայականի երգիծական հակադրությունը, երգիծելով բացահայտում անձի, երևույթի վնասակար, վրանգավոր էությունը: Կարծում ենք՝ գրողի կողմից այս անունները միայն երգիծելու նպատակով չէ, որ կիրառվում են, սա նաեւ հատուկ արված քայլ է ընդհանրապես կերպարը անհարականացնելու, հասարակության համար վրանգավոր երևույթի համընդհանուր բնույթը ընդգծելու համար:

Այսպիսով, Երվանդ Օպյանի գեղարվեստական արձակում, հատկապես քաղաքական երգիծանքի էջերում շատ են գործածվում երգիծական խոստուն անուններ, որոնք կամ հեղինակային կազմություններ են, կամ բառապաշարից ընկրված հարմար բառեր ու բառակապակցություններ: Գործածված խոստուն անունները են գեղարվեստական, են երգիծական առումներով դառնում են լեզվաոճական լիարժեք իրողություններ եւ հաճախ իրենց վրա են վերցնում ընդհանուր բովանդակության իմաստային-արտահայտչական բեռը, օժանդակում կերպարի փխպականացման գեղագիտական այլ խնդիրների լուծմանը: